

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌԱՖԶՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

15.

Թիֆլիս 17 մայիսի 1883 ամ.

Յարգելի բարեկամ,

Անցեալ նամակովս յայտնած էի Ձեզ, որ «Մշակի» խմբագրատան մէջ խուզարկութիւն կատարուեցաւ, այժմ շտապում եմ հաղորդել Ձեզ, որ ներկայ ամսի 13-ին նոյնպէս խուզարկութիւն կատարվեցաւ իմ բնակարանի մէջ: Բոլոր թղթերս, մինչև անգամ դեռ չտպւած գրաւոր աշխատութիւններս, — բոլորը գրաւեցին: Եւ այժմ գտնվում եմ ժանդարմների վարչութեան հսկողութեան ներքոյ, ինձ արգելված է Թիֆլիսից հեռանալ:

Դեռ յայտնի չէ, թէ ինչով կը վերջանան այդ խստութիւնները, միայն այդքանը յայտնի է, որ սաստիկ նշանակութիւն են տալիս գործին, որը ինքնըստինքեան շատ հասարակ բան է:

Թէ ես թէ իմ համախոհները մինչև այսօր Ռուսաց կառավարութեան դէմ ոչինչ յանցաւոր նպատակներ չենք ունեցել և երբէք ուսւ նիզիլիստների¹⁾ հետ յարաբերութիւններ չենք ունեցել: Մեր գործունէութեան նպատակը, մեր ցանկութիւնները խիստ համեստ են եղել, և մեր ազգային պէտքերի սահմանից այն կողմ չեն անցել: Հայկական հարցը ծագելուց յետոյ մենք, իրաւ է, աշխատել ենք տաճկահայերի ցաւալի դրութեան բարւոյժման մասին, աշխատել ենք Բերլինի 61-րդ յօդուածի իրագործման մասին, — բայց մեր աշխատութիւնները կատարվել են հրապարակաբար, մենք գաղտնի ոչինչ չենք ունեցել:

Իսկ այժմ, երբի զանազան մատնիչներ, այստեղի կառավարութեանը մոլորութեան մէջ են ձգել, իբր թէ գտնվում են զանազան գաղտնի բնկերութիւններ, թէ այստեղ Անդրկովկասում և թէ Տաճկաստանում, որոնք ծածուկ կապեր ունեն միմեանց հետ, և ամենայն ջանքերով աշխատում են վերականգնել Հայոց հին թագաւորութիւնը և այլն: Տեսնում էք, որքան հրէշաւոր կերպարանք են

1) Նիհիլիստ էին կոչում Արեւմտեան Եւրոպայում Ռուսաստանի 70-ական թւականների յեղափոխականներին, որոնց եւ ակնարկում է Ռաֆիին: Յ. Տ.-Յակ.

տուել գործին: Այս տեսակ երևակայական ընկերութիւններ մենք երբեք չենք ունեցել և այժմ չունենք: Եւ բոլոր Եւրոպայից ստորագրված 61-րդ յօդուածի իրագործումը պահանջելու համար հարկ չը կար գաղտնի ընկերութիւններ ստեղծել:

Ես չեմ կարծում, որ իմ բնակարանից տարած թղթերի մէջ գտնվեն այնպիսիները, որոնք որ և իցէ յանցանք դնեն իմ վրա. իսկ իմ մինչև այսօր լոյս ընծայած գրքերը բոլորը տպագրվել են ցենզուրայի թոյլտուութեամբ: Ե՞ս ինչով եմ մեղաւոր, որ կառավարութեան տրամադրութիւնը հայկական հարցի վերաբերութեամբ այժմ, ինչպէս երևում է, փոխվել է: Թող հրամայեն, որ ես այսուհետև չը գրեմ: Ես ուրախ կը լինէի, եթէ այսքանով վերջանար գործը, բայց վախենում եմ, որ հետացնեն Ռուսաստանից, որովհետև ես օտար պետութեան հպատակ լինելով, բանտարկել կամ աքսորել չեն կարող:

Ես նպատակ ունէի յունիսի 1-ին հեռանալ Թիֆլիսից և գնալ տաճկաց Հայաստանում ճանապարհորդելու, բայց այդ անբախտութիւնը կապեց ինձ Թիֆլիսի հետ. ես ստիպված պիտի լինեմ մնալ այստեղ և սպասել մինչև քննութիւնների վերջանալը:

Վատ ժամանակների մէջ ենք ապրում. Վրացի ուղտ են շինում և մարդկանց չարչարում են: Խնդրեմ Ձեր նամակներում զգոյշ լինէք, չատ հաւանական է, որ իմ անունով եկած նամակները կը բաց անեն: Ձեր առաջվայ նամակները, թէև բոլորովին անմեղ էին, այսուամենայնիւ ես ոչնչացրի:

Ձեր Յ. Մելիք-Յակոբեան.

16.

Թիֆլիս, 2 Յունիսի 1883 ամ.

Յարգելի բարեկամ,

Վերջին նամակը ստացայ. շնորհակալ եմ Ձեր ցաւակցութեան համար: «Մշակը» դեռ դադարեցրած չէ, և յոյս ունենք, որ չը դադարեցնեն: Միայն «Մշակի» վերաբերութեամբ սաստիկ խստութիւններ են գործ դրվում, ցենզորը խմբագրին պարտաւորեցրել է, որ իւրաքանչիւր համարի մէջ տպված թէ անստորագիր և թէ կեղծ անուններով ստորագրված բոլոր յօդուածների, թղթակցութիւնների և մինչև անգամ լուրերի հեղինակների անունները ամեն անգամ պէտք է յայտնէ ցենզորին: Մինչև այսօր խմբագիրը միշտ գաղտնի էր պահում իր աշխատակիցների անունները և ամեն պատասխանատուութիւն իր վրա էր առնում, իսկ այժմ ստիպեցնում են յայտնել բոլորի անունները: Դրա հետեանքը այն կը լինի, որ մեր աշխատակիցները այսուհետև երկիւղ կը կրեն և կը դադարեն թղթակցութիւններ ուղարկել կամ լուրեր հաղորդել. Լրագիրը կը վնասվի:

Թէ պ. Արծրունու գործը և թէ իմ գործը դեռ ևս քննվում է. ես չեմ կարծում, որ մեր մօտից տարած թղթերի միջից գտնեն այնպիսի բաներ, որոնք որ և իցէ յանցանք դնէին մեզ վրա: Մենք կասկածաւոր թղթեր երէք չենք ունեցել և կասկածելի հասարակութիւնների հետ յարաբերութիւն ունենալուց միշտ հեռու ենք պահել մեզ: Իսկ որքան գործել ենք մեր բուն ազգային պէտքերի մասին,—դա մեզ թոյլ տուած է եղել կառավարութիւնից: Նրա հաւառակ որ և իցէ գաղտնի նպատակ կամ յանցաւոր ցանկութիւններ չենք ունեցել: Ուրեմն այլ ևս ինչ կարող էին գտնել, որով դատապարտէին մեզ: Արդարութիւնը վերջ ի վերջոյ յաղթող կը հանդիսանայ և մատնիչների երեսը կը սեանայ...

Դուք, ի հարկէ, լսած կը լինէք, որ երևանում ևս մի քանի նշանաւոր երիտասարդների մօտ խուզարկութիւններ են արել, սկզբում մի քանի օրով կալանաւորել են, յետոյ դրամակի երաշխաւորութիւն են առել ու բաց թողել:

• • • • •

Վատ ժամանակներում ենք ապրում. ամանաարդար մարդը կարող է կասկածանքի ենթարկվել և տարիներով տանջվել: Չը գիտենք, ինչով կը վերջանայ այդ բոլորը: Դրութիւններս սաստիկ յուսահատական է: Ժամէ ժամ սպասում ենք նորանոր անախորժութիւնների. աշխատելու և գործելու սիրտ չէ մնացել: Անորոշ դրութիւնը սպանում է մեզ: Յաւում եմ, որ մի այսպիսի ժամանակ, երբ երկու նշանաւոր ազգային հարցեր ունենք վճռելու (կաթողիկոսական և հայկական հարցը) մենք ստիպված ենք առ ժամանակ լռել: Մեր հակառակորդները խօսում են, զրում են, իսկ մենք պատասխանել չենք կարողանում...

Ես այժմ ժանդարմիայի վարչութեան հսկողութեան ներքոյ եմ գտնվում. ինձ արգելված է Թիֆլիսից հեռանալ. երբ կազատեն ինձ, դիտաւորութիւն ունեմ առ ժամանակ թողնել Թիֆլիսը: Բայց ուր գնալիքս և ինչով գնալիքս չը գիտեմ...

Այժմեան հանգամանքներում «կայծերի» երկրորդ հատորը հրատարակել չեմ կարող, պէտք է սպասեմ յարմար ժամանակի: Գործերը ինչ ընթացք որ ստանալու լինեն, կը հաղորդեմ Ձեզ:

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեան.

• • • • •

17.

Թիֆլիս, 26 Յունիսի 1883 ամ.

Յարգելի բարեկամ,

Իմ վիճակը այժմ աւելի ծանրացաւ, քանի որ է, որ արդէն տնային բանտարկութեան եմ ենթարկւած, բնակարանիցս դուրս գալու իրաւունք չունեմ, տան դռներ պահապան են դրել:

Այս դրութեան մէջ պէտք է մնամ մինչև քննութիւնների վերջանալը, բայց քննութիւնները կարող են տարիներ տևել:

Թէև մինչև այսօր ոչ մի մեղադրանք ապացուցւած չէ իմ վերաբերութեամբ, այսուամենայնիւ, խստութիւններ են գործ դնում: Իմ բնակարանից տարած թղթերի մէջ գտել են մի քանի բոլորովին աննշան և անմեղ բաներ, որոնց մեծ նշանակութիւն են տալիս: Թէև վերջը, երբ գործը այստեղի պալատի պրոկուրորի ձեռքը կը հասնի, այն ժամանակ կը յայտնվի արդարութիւնը, բայց մինչև այն ժամանակը բաւական տանջանքներ պէտք է կրեմ: Ի՞նչ պէտք է արած, կը համբերենք:

Իմ թղթերը, որ տարել էին իմ բնակարանից, տակաւին չեն վերադարձրել, բայց պ. Արծրունու բնակարանից տարած թղթերը վերադարձրին, պահել են երկու թուղթ միայն, բայց չատ անմեղ բաներ են:

Ձանազան քաղաքներում հայ երիտասարդների տներում խուզարկութիւններ են կատարւում. բայց ամեն տեղ ոչինչ չեն գտնում: Ձը գիտեմ, ինչով կը վերջանայ այդ բոլորը: Ձարմանալին այն է, որ խուզարկութիւնները կատարւում են նրանց մօտ միայն, որոնք «Մշակի» թղթակից են եղել:

Այնքան վշտացած եմ, որ եթէ ազատվելու լինեմ, վճռել եմ այլ ևս այստեղ չը մնալ, բաւական տանջվեցայ: Մեր հասարակութեան սառնասրտութիւնը աւելի սպանում է ինձ, ոչ մի կողմից կարեկցութիւն չեմ գտնում: Մեր ժողովրդի ապերախտութիւնը դէպի իր մշակները Ձեզ բաւական յայտնի է:

Խնդրեմ, եթէ ինձ նամակ գրելու լինէք, ուղղակի իմ անունով չուղարկէք, դրեցէք մասնաւոր անձանց ծրարների մէջ:

Ընդունեցէք իմ յարգանքը:

Յ. Մելիք-Յակոբեան.

Տնային բանտարկութիւնը ոչ թէ նրա համար է, որ ինձ վրա որ և իցէ յանցանք է ապացուցւած, այլ նախագգուչութեան համար է, որ քաղաքիցս չը հեռանամ:

18.

Թիֆլիս, 12 Յուլիսի 1883 թ.

Յարգելի բարեկամ,

Անցեալ նամակովս Ձեզ անախորժ տեղեկութիւններ էի հաղորդած, այժմ մասամբ կուրախացնեմ Ձեզ. տնային բանտարկութեան մէջ ֆնացի 10 օր միայն, յետոյ պարսից հիւպատոսը երաշխաւոր եղաւ 3000 ռուբլու պատասխանատուութեամբ և ինձ ազատ թողուցին, բայց տակաւին Թիֆլիսից հեռանալու իրաւունք չունեմ, մինչև գործերի քննութիւնը վերջանայ:

Պարոն Արծրունին սաստիկ հիւանդ էր, կուրծքից արիւն էր գնում. այժմ արիւնը դադարել է, և առողջանալու վրա է. վտանգը անցաւ. Վերջին ժամանակների անախորժ հանգամանքները նրա վրա սաստիկ ներգործութիւն արեցին, և նա դիմանալ չը կարողացաւ:

Պարոն Արեւեանը ինձ ասաց, որ Դուք մի բանի մասին անհանդիստ էք. միամիտ կացէք, ինձ մօտ Ձեր կողմերից եկած ոչինչ չեն գտել:

Խնդրում եմ, եթէ գրքերի վաճառքից փոքր ի շատէ փող է գոյացել, ուղարկէք ինձ. ծախքերի կարօտութիւն ունեմ. Գիտեմ, որ վաճառածները ճիշտիւ տուած կը լինէք, այն եւ յայտնի է, որ մեր հայերը ճշման ծոյլ են իրանց պարտքերը վճարելում, այսուամենայնիւ, աշխատեցէք, որքան հնար է. հաւաքել ապառիկները:

«Մեղուի» մէջ մի շարք կիսատոտ կրիտիկաներ տպւեցան իմ աշխատութիւնների մասին, որոնց մէջ մինչև անգամ ուղղակի մատնութիւններ կային: Շատ պատասխաններ են ստացվել «Մշակի» խմբագրատան մէջ յիշեալ կրիտիկաների մասին: Ժամանակը վատ է, զեռ եւ լռում ենք:

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեան.

19.

Թիֆլիս, 27 Սեպտ. 1883 թ.

Յարգելի բարեկամ,

Ձեր փոստով ուղարկած յիսուն ռուբլին ստացած եմ ի հաշիւ վաճառված գրքերի: Ընդունեցէք իմ շնորհակալութիւնը:

Ձեզ յայտնի գործը լաւ գրութեան մէջ է. թէ ես և թէ պ. Արծրունին արդարացած ենք: Երևանի 32 հոգի մեղադրվածներից կը պատժվեն երեք անձինք միայն, թեթև պատժով: Բայց թէ ես և

թէ պ. Արծրունին տակաւին գտնվում ենք երաշխաւորութեան և հսկողութեան ներքոյ, որովհետեւ գործը ուղարկված է Ս. Պետերբուրգ, այնտեղ պէտք է տան վերջնական վճիռը: Իմ թղթերը դեռ չեն վերադարձրել:

Այս տարի ես շատ վնասներ կրեցի: Մշտապէս կաշկանդված լինելով, ոչինչ գրել և ոչինչ հրատարակել չը կարողացայ: Նոյն դրութիւնը դեռ ես չարունակվում է: Նրեակայեցէք մի գրողի վիճակը, որ պէտք է ապրէ գրական աշխատանքով:

Այս տեսակ դժուարութիւններ շատ ենք անց կացրել, կը համբերենք և կը սպասենք մինչև վերջը:

Ընդունեցեք իմ յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեան.

20.

Թիֆլիս, 28 Դեկտ. 1883 թ.

Յարգելի բարեկամ,

Կարգացէք պ. Թումանեանցի բաց նամակը և բովանդակութիւնից յայտնի կը լինի Ձեզ, թէ ինչու ես վճռեցի Ձեր միջնորդութեամբ հասցնել նրա նամակը: Ձեզ յայտնի է նրա անցեալ տարիների թղթակցութիւնների բովանդակութիւնը, երբ նա ցանկանում էր իմ աշխատութիւններից մի քանիսը իր ծախքով տպագրել: Ձեզ յայտնի է և այն, որ երկար Ձեզ և ինձ ձանձրացնելուց յետոյ, վերջապէս իր խոստմունքը թողեց անկատար:

Մի երկու ամիս առաջ իմ աշակերտներից մէկը, պ. Ապրեսեանցը, ցանկութիւն ունէր տպագրելու «Ձէլալէգդինը» և նուիրել յօգուտ իմ յօրեւանի: Այդ միջոցներում ստանում եմ պ. Թումանեանից երկու հեռագրներ, որով խնդրում էր, որ ես յայտնեմ պ. Ապրեսեանին, որ նա դադարեցնէ յիշեալ վէպի տպագրութիւնը, որովհետեւ ինքը, պ. Թումանեանցը արդէն սկսել է «Ձէլալէգդինը» տպագրութիւնը, և վերջանալու վրա է: Որովհետեւ այդ գործը ուղղակի ինձանից կախում չունէր, ես նրա հեռագրները յանձնեցի յօրեւանի կատարող մասնաժողովին և նրանք պատուիրեցին պ. Ապրեսեանին, որ թողնէ իր տպագրութիւնը: Շատ հասկանալի է, որ մասնաժողովը համոզված էր, որ պ. Թումանեանցը նոյն նպատակով է տպագրում, ինչ նպատակով որ պիտի տպագրել տար պ. Ապրեսեանցը, որովհետեւ պ. Թումանեանցին յայտնի էր պ. Ապրեսեանի նամակի բովանդակութիւնը, որ տպված էր «Մշակի» մէջ:

Հեռագրները ստանալուց յետոյ, անցնում է մի քանի շաբաթ, յանկարծ ստանում եմ պ. Թումանեանից նամակ, որով յիշեցնում

է ինձ անցեալ տարիներէ մեր քանակցութիւնները «Ջէլալէդդինի» տպագրութեան մասին, ներողութիւն է ինդրում, որ ատանց կրկին ինձանից իրաւունք ստանալու ձեռնարկեց տպագրելու, և վերջապէս, խոստանում է, որ մեր հին պայմանի համեմատ, որը ունեցել ենք անցեալ տարիներում, ինձ պատկանող օրինակները կուղարկէ ելն:

Պարոնի նամակը ևս ամօթ համարեցի ցոյց տալ մասնաժողովին, առաւելապէս այն պատճառով, որ մի այնպիսի դէպքում, երբ օտարները աշխատում են թէ բարոյական և թէ նիւթական համակրութիւն յայտնել ինձ,—այդ ժամանակ իմ հայրենակիցը և իմ աշակերտը վաճառականական սակարկութեան մէջ է մտնում ինձ հետ, այն ևս անկանոն կերպով:

Պարոնի նամակը կը ստանաք ծրարիս մէջ և կը կարդաք. խնդրեմ հոգ տանէք, գոնէ պատկերը օրինաւոր կերպով փորագրել տայ: Եւ նրան աւելի ոչինչ չը գրեցի, որովհետեւ չարժէ այդ տեսակ երեսաներից անհիւ զգացմունք սպասել:

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեան.

21.

Թիֆլիս, 18 փետրվարի 1884 ամի.

Յարգելի բարեկամ

Մեկըմ կասպարիչ,

Ստացայ Ձեր նամակը իմ գրքերի հաշուի հետ. ստացայ նաև 46 ըուրլ պ. Արասխանեանից նոյնպէս գրքերի հաշուից: Շնորհակալութիւն:

«Ջէլալէդդինի» մի օրինակը տեսայ, ուղարկված էր «Մշակի» խմբագրատանը. տպագրութիւնը և թուղթը գեղեցիկ է, բայց լիքն է տպագրական սխալներով. շատ տեղերում մի բառ ուրիշ բառի տեղ է դրված, շատ տեղերում բառերը պակասում են: Չը գիտեմ, ով է արել դրա սրբագրութիւնը: Պատկերը լաւ չէ դուքս եկել, խիստ սառն է, կեանքի արտայայտութիւն չունի: Երեւի խնայել են ծախքը և փորագրել չեն տուել:

Պ. Թումանեանիցից գեռ իմ նամակի պատասխանը չեմ ստացել, ինձ պատկանելի գրքերն նոյնպէս դեռ ևս չէ ուղարկել, թէև յայտարարութիւնը ուղարկել էր և տպվեցաւ «Մշակի» մէջ: Պահանջողներ շատ կան, բայց գրքեր չը կան:

• • • • •
• • • • •

Իմ և պ. Արծրունու մէջ տեղի ունեցած մի փոքրիկ անհամաձայնութեան պատճառով ևս դադարեցի գրել «Մշակի» մէջ. բայց շուտով կը շարունակեմ աշխատակցել և նրան միայնակ չեմ թողնի։ Այդ մարդը եթէ իր լաւ ձգտումների հետ անտանելի բնաւորութիւն չունենար, մենք շատ գործեր կարող էինք յաջողացնել...

Յաւում եմ, որ Դուք Ձեր երկու ամենալաւ բարեկամների կորստեան դժբախտութիւնն էք ունեցել։ Լաւ բարեկամը ամենաբարձր միջիթարութիւնն է մարդու համար կեանքի մէջ։

Ընդունեցէք իմ խորին յարգանաց հաւաստիքը։

Յ. Մելիք-Յակոբեան.

22.

Թիֆլիս, 7 Մարտի 1884 ամի։

Յարգելի բարեկամ

Մեկքում Կասպարիչ,

Ձեր 28 փետրվարի նամակը ստացայ. պ. Թումանեանցի յիմար վարմունքը որքան Ձեզ, աւելի ևս ինձ վրդովեցնում է. այդ թեթեամիտ համբալը ինձ կատարելապէս խայտառակեց։ Երևակայել չեմ կարող մի այսպիսի յիմարութիւն. գիրքը լոյս է տեսնում, միմի օրինակ ուղարկում է այստեղի բոլոր խմբագրներին, և նրանց յայտարարութիւն է ուղարկում, յայտարարութիւնները տպւում են, թէ «Թիֆլիսում կարելի է ստանալ միայն հեղինակից»—ամեն օր 10—20 մարդիկ դիմում են ինձ, գիրք են խնդրում, բայց ինձ մօտ ոչ մի հատ գիրք չը կայ, բոլորին պատասխանում եմ, թէ զեռ չեմ ստացել։ Այդ ինչ յիմարութիւն է և վերջապէս նա ինչ իրաւունք ունի իմ մասին յայտարարութիւն տպել տալ, միթէ ևս ինքս չէի կարող յայտարարել գրքերը ստանալուց յետոյ։ Նա այսքանը չէ մտածում, երբ յայտարարութիւնը տպւեցաւ, պէտք է գիրքը պատրաստ լինի գրափաճառների կամ հեղինակի մօտ։

Ես կը ներէի պ. Թումանեանցի յիմարութեանը, եթէ միայն յիմարութիւն լինէր, բայց ես նրա վարմունքի մէջ նկատում եմ և խայտառակութիւն։ Նա «Ձէլալէդդինը» սկսեց տպագրել առանց ինձանից իրաւունք խնդրելու։ Իմ մի քանի տարի առաջ տուած իրաւունքը կորցրել էր իր նշանակութիւնը, որովհետեւ նա ինքը չը կատարեց մեր մէջ կայացած պայմանը։ Այդ պէտք է Ձեզ լաւ յայտնի լինի։ Ուրեմն, երբ նա դիտաւորութիւն ունէր տպագրելու, պէտք է նորից դիմէր ինձ և իրաւունք խնդրէր. այդ մասին յայտնի

օրէնքներ կան Բայց նա այդ օրինական ձեերին չը հետեցոյ նա առանց իմ կամքը հարցնելու ինքնալամ սկսեց տպագրել զիրքը այն ժամանակ, որ «Մշակի» մէջ նրա ձեռնարկութիւնից շատ առաջ լոյս էր տեսած պ. Ապրեսեանցի նամակը, որով նա առաջարկում էր «Ջէլալէդդինի» տպագրութեան համար հանդանակութիւն սկսել և տպագրել յօգուտ հեղինակի յօրելեանի և պ. Ապրեսեանը սկսել էր արդէն փող հաւաքել: Այդ միջոցներում հետագիր եմ ստանում պ. Թումանեանցից, որով խնդրում է՝ յայտնել պ. Ապրեսեանցին, որ դադարեցնէ իր ձեռնարկութիւնը, որովհետեւ ինքը արդէն սկսել է տպագրել «Ջէլալէդդինը» և նոր տարվայ սկզբում (1884 թուի) գիրքը պատրաստ կը լինի ևս խնդրեցի պ. Ապրեսեանցին, որ թողնէ իր գիտաւորութիւնը, հաւատացած լինելով, որ պ. Թումանեանցը նոյնպէս ամբողջ տպագրութիւնը նուիրել է յօգուտ յօրելեանի, ինչպէս նպատակ ունէր պ. Ապրեսեանցը:

Անցնում են շաբաթներ, անցնում է ամիս, գիրքը լոյս է տեսնում մամուլի տակից,—այդ ժամանակ միայն նամակ եմ ստանում պ. Թումանեանցից, որի մէջ յիշեցնում է ինձ մեր մի քանի տարի առաջ ունեցած հին պայմանը... Ասեցէք, խնդրեմ, դա խաբեբայութիւն չէ, թէ ինչ պատասխանեցի ես նրան, Ձեզ յայտնի է, ես նրա նամակի պատասխանը բաց ուղարկեցի Ձեզ ծրարով: Ես կարծում էի, որ իմ պատասխանը ստանալուց յետոյ նա այնքան քաղաքավարի կը լինի, որ կը հասկանայ իր պարտաւորութիւնը. բայց երեւակայեցէք. մինչև այսօր իմ նամակի պատասխանն էլ չեմ ստացել: Հիմա ինչ պէտք է անել այդ տեսակ լակոսների հետ: Ես նրա հօր մասին շատ անեկդօտներ էի լսել, բայց երևում է, որ որդին պիտի գերազանցէ հօրից:

Թէ անցեալ տարիներում և թէ վերջին անգամ ես նրան գրել էի, որ «Ջալալէդդինի» տպագրութիւնը Ձեր գիտութեամբ և Ձեր խորհուրդով կատարվի: Այժմ Ձեր նամակից երևում է, որ նա Ձեզանից ոչինչ չի հարցրել և Ձեր կարգադրութեանը չէ գիմել, այլ գործը յանձնել է մի ինչ որ Բարխուդարեանցի, որ գիրքը լցրել է հարիւրաւոր աններելի սխալներով:

Ես դեռ սպասում եմ նրանից իմ նամակի պատասխանը. ես թոյլ չեմ տայ, որ նա ինձ հետ այս տեսակ խաղեր խաղայ: Նա գրականութեան գործում նոյնպիսի խարդախութեամբ է վարվում, որպէս իր հայրը վարվում է Բիւմիւի և բաղամի վաճառականութեան մէջ:

Ձեզանից հարցրել են մեր անցեալ տարիների պայմանը, այն պայմանը ոչինչ նշանակութիւն չունի: Ես նրան մեծ գիջում արած կը լինեմ, եթէ համաձայնվեմ, որ իր դրած տպագրութեան ծախքի փոխարէն նշանակեալ գնով գրքիւ մեծ աւել, հսկ մնացեալ օրի-

նակները ուղարկէ ինձ: Չր զիտեմ, որքան օրինակ է տպել:
Պարոն Արծրունու մասին հետեւեալ նամակով կը գրեմ Ձեզ:
Զեռ Թ. Մելիք-Յակոբեան.

23.

Թիֆլիս, 13 Մարտի 1884 ամի

Յարգելի բարեկամ

Մեկքօն Կասպարիչ:

Նախորդ նամակումս խոստացած էի գրել Ձեզ իմ և պ. Արծրունու մէջ տեղի ունեցած սառնութեան պատճառները, որոնք հետաքրքրում են Ձեզ որպէս իմ և նրա բարեկամի:

Անկարելի է, որ Դուք նկատած չը լինէք, որ անցեալ տարի «Մշակը» թէ իր ներքին բովանդակութեամբ և թէ իր կանոնաւոր հրատարակութեամբ խիստ թոյլ կերպով գնաց և կատարելապէս չը գոհացրեց իր ընթերցողներին: Այդ տարուայ համար կարելի էր ներել, որովհետեւ «Մշակի» խմբագրատան հետ այնպիսի անսպասելի անցքեր պատահեցան, որ աւելին չէր կարելի պահանջել:

Եւ որպէս զի «Մշակը» կրկին իր առաջվայ ուժը և կենդանութիւնն ստանայ, ես անցեալ տարվայ վերջին ամիսներում առաջարկեցի պ. Արծրունուն, որ խմբագրատան կազմակերպութիւնը փոխվի և նոր տարուանից սկսեալ, նոր խմբագրութիւն կազմվի, բոլորովին ուրիշ հիմունքների վրա հաստատված: Նա համաձայնվեցաւ ինձ հետ, բայց երբ նոր տարին հասաւ, այլ ես չը կատարեց իր խոստումները: Ի՞նչ և՛ զաւ հետեւանքը.— այն, որ ես նախագուշակում էի, ինքը չը կարողացաւ շարունակել, և ստիպվեցաւ շարաթը երկու անգամ հրատարակել, և ի՞թէ այսպէս տանէ գործը, գուցէ ստիպված կը լինի բոլորովին դադարեցնել:

«Մշակի» կարեւորութիւնը Հայոց հասարակութեան համար Ձեզ բացատրելու հարկ չը կայ, Դուք ինքներդ աւելի լաւ գիտէք, բայց ինչ արած, որ այդ անտանելի մարդը իր անտակտութեամբ ամեն բան փչացնում է:

Նրա մասնաւոր գործերի դրութիւնը այնպէս է, որ նա գոնէ առ ժամանակ պէտք է իրան հետեւ պահէր խմբագրական հոգսերից, մինչև իր սեպհական գործերը կարգի գնելը: Եւ ես «Մշակի» բոլոր հոգսերը ինձ վրա էի առնում, բայց ինձ մի այնպիսի դրութեան մէջ գրեց, որ երկար համբերել չը կարողացայ:

Այժմ թէև չեմ գրում, բայց իմ յարաբերութիւնները «Մշակի» հետ բոլորովին կտրված չեն: Աշխատում եմ և կը շարունակեմ աշխատել, որ այդ լրագիրը կրկին վերականգնի, որովհետեւ ես իմ

անունը կապված եմ համարում նրա հետ, և եթէ «Մշակի» վրա քի՞ծ դրուի, նրա մի մասն էլ իմ վրա կը ընկնի։ Տեսնենք, ինչով կը վերջանայ։

Պարոն Թումանեանցի նամակը կը կարդաք և իրան կը յանձնէք։ Այդ յիմարը ինձ այն աստիճան զայրացրել է, որ ուրիշ կերպ չէի կացող գրելու։ Այն անպիտան Բարխուդարեանցից իմ հեռագրի պատասխանն ստացայ, թէ գրքերը վաղուց ուղարկված են։ Բայց ինչ ճանապարհով, ինչ միջոցով,—այդ մասին ոչինչ չէ յայտնել։ Գիտեմ, որ սուտ է։ Եթէ փոստայով ուղարկած լինէին, շատուց ստացած կը լինէի։ Հեռագիրը 10 օրից աւելի է, որ ստացել եմ։ Գոնէ մի քանի հարիւր օրինակ փոստայով ուղարկէին, եթէ ծախքերը խնայում էին, իսկ մնացածը ուրիշ ճանապարհով։

Բանը նրանումն է, որ եթէ այսուհետեւ գրքերը այստեղ հասնելու լինեն, այլ ես այնպէս չեն վաճառվի, ինչպէս առաջ կը վաճառվէին։ Որովհետեւ երբ ուշանում է, հասարակութիւնը սառչում է, էլ ուշադրութիւն չէ դարձնում։ Սկզբից միայն հետաքրքրվում են, երբ առաջին անգամ յայտարարութիւնը կարգում են։

Ընդունեցէք իմ յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեանց.

24.

Թիֆլիս, 24 Ապր. 1884 ամ.

Յարգելի Բարեկամ,

Ձեր վերջին երկու նամակն երբ ստացել եմ, առաջին նամակով բաւական զգալի յանդիմանութիւն էք անում ինձ և իմ վարմունքը պ. Արծրունու վերաբերութեամբ համեմատում էք պ. Նիկողոսեանցի վարմունքի հետ։ Մի այսպիսի յանդիմանութիւնը կարող է անել կամ վատ թշնամին կամ լաւ բարեկամը։ Ես ընդունում եմ այդ վերջինը։ Իբրեւ հետեւից նայողի և գործերի մանրամասնութիւններին անտեղեակ մարդու, ես բոլորովին բնական եմ գտնում Ձեր արդար վրդովմունքը, երբ տեսնում էք, որ «Մշակը» այսօր անկեալ դրութեան մէջ է և նրա խմբագիրը միայնակ ու անօղնական մնացած։ Բայց ով է մեղաւորը.—դրանումն է զլխաւոր հարցը։

Ես, ի հարկէ, այժմ չեմ կարող այն բոլոր գաղտնիքները դուրս թափել, որոնք աւելի քննաքննական բնաւորութիւն ունեն, և որոնք չարաչար կերպով ազդեցին թէ պ. Արծրունու կործանման վրա և թէ «Մշակի» անկման վրա։ Դա մի երկար պատմութիւն է, որը գուցէ մի ժամանակ բաւական առատ նիւթ կը տայ պ. Արծրունու

կենսագրութեանը, եւ այդ մարդուն յարգում եմ, նրա գործունէութիւնը միշտ ազնիւ և օգտաւէտ եմ համարել, բայց նա մի անբախտ զօհ է իր գործած մի մեծ սխալի, որը ոչ ոք ուզող է կարող և որի պատճառով ինքը պատժվեցաւ...

Եւ բաժանում եմ Ձեր բարի խորհուրդը, թէ պ. Արծրունու այժմեան դրութեան մէջ եւ պէտք է նրան միայնակ չը թողնէի։ Եւ այդ մասին արել եմ, ինչ որ կարող էի և որքան ինձանից կախված էր։ Դեռ անցեալ տարուայ վերջին ամիսներին եւ առաջարկեցի պ. Արծրունուն խմբագրատան բոլոր հոգսերը ինձ վրա թողնել, որպէս զի ինքը ազատ ժամանակ ունենայ իր տնտեսական գործերը կարգի դնելու։ Նիւթական ոչինչ հաշիւներ չը կային մէջտեղում։ Եւ առաջարկեցի մինչև անգամ ներկայ տարուայ սկզբից ամեն ինչ ձրի կատարել և ոչինչ վարձատրութիւն չը պահանջել նրանից, միայն թէ «Մշակը» պահպանվի։ Բայց իմ բոլոր ջանքերը իզուր անցան, որովհետև մէջտեղում կար մի սառսնայ, որ ամեն ինչ խառնում էր. — ինչ կարող էի անել կնոջ ինտրիգայի դէմ...

Իմ և պ. Արծրունու մէջ ոչինչ անբաւականութիւններ չեն տեղի ունեցել։ Եւ վրդովված եմ եղել միայն այդ կնոջ դէմ, որը համարեա թէ կախարդել է խեղճ մարդուն, որը ստիպում է նրան ամեն ինչ ծախել, ամեն ինչ քարուքանդ անել և գնալ արտասահման, իրանց նշաւակութիւնը մի անծանօթ երկրում ծածկելու համար... այլ եւ ինչ կարող էի անել եւ, երբ գործի մէջ այդ տեսակ ընտանեկան գաղտնիքներ կային։

Եւ առաջարկեցի պ. Արծրունուն (փառք Աստուծոյ, մեր մէջ վկաններ կան) եթէ նա ցանկութիւն ունի արտասահման գնալու, թող «Մշակը» ինձ յանձնէ, և խոստաղայ իւրաքանչիւր ամիս 150 ռուբլ փող ուղարկել նրան։ Նա սկզբում համաձայնվեցաւ, բայց յետոյ իր խոստումները չը կատարեց։ «Եթէ եւ մեռնելու եմ — ասում է նա — թող ամեն ինչ ինձ հետ մեռնի»... Ահա այդ ծայրայեղութեան է հասել նա։

Եւ դեռ սպասում եմ գուցէ հանգամանքները կը փոխվեն, գուցէ եւ հնար կը գտնեմ «Մշակը» վերականգնելու։

Այժմ խմբագրատան մէջ ոչ ոք չէ մնացել. բոլոր ծառայողները արձակված են։ Եթէ գործը այսպէս գնայ, նա անկարող պիտի լինի շարունակել և մի երկու ամսից յետոյ ստիպված կը լինի դադարացնել։

Եթէ պ. Արծրունու հետ հաշտվել չը կարողացանք, այդ դէպքում իմ բարեկամները խորհուրդ են տալիս ինձ մի ամսագիր հրատարակել «Փորձի» զիրքով և մի թերթ, որ շաբաթը երկու անգամ հրատարակվէր։ Այդ մասին դեռ մտածում ենք, երբ ամեն պատշաճութիւններ կարգի կը դրվեն, եսկոյն խնդիր կը ներկայացնեմ

հրաման ստանալու համար: Ես այն աստիճան սովորած եմ հրապարակախօսութեան պարագմունքին, որ ինձ համար մի կենսական պահանջ է դարձել, այսուհետեւ չեմ կարող անգործ մնալ: Իմ սրտից արիւն է գնում, երբ տեսնում եմ, որ մեր հրապարակախօսները ամեն կեղտոտութիւն դուրս են թափում, իսկ ես ստիպւած եմ լուռ ակննատես լինել...

Ձեր Յ. Մելիք-Յակոբեան.

25.

Թիֆլիս, 21 Յունիսի 1884 ամի:

Յարգելի Բարեկամ,

Ձեր վերջին նամակը ստացած եմ. ուրախ եմ, որ համաձայն-վեցանք միմեանց հետ. պ. Արծրունու վիճակը էգուց կը որոշվի. նրա կայքերի աճուրդի օրն է: Շատերի կարծիքն այն է, որ գնողներ չեն գտնվի և կայքերը կը մնան բանկի սեպականութիւն: Այժմ Թիֆլիսը դրամական սաստիկ նեղ դրութեան մէջ է. կապիտալիստների մօտ փող չը կայ:

Ցաւալի է, որ այսպիսի թանգազին կայքերը պէտք է դառնան վրացիների սեպականութիւն: Բանկը նրանցն է պատկանում: Դիտաւորութիւն կար՝ ընդհանուր ազգային հանդանակութեամբ գնել այդ կայքերը և նուիրել էջմիածնի ձեմարանին: Բայց խօսեցին, խօսեցին և ոչինչ չը յինեցին, մինչև աճուրդի օրը հասաւ:

Աճուրդից յետոյ պ. Արծրունին ամենաթշուառ մարդը կը դառնայ. նա իր բոլոր կալուածները կը կորցնէ, և բացի զբանից, աւելի քան 100 հազար բուրլ մասնաւոր պարտքերի տակ կը մնայ: Ի՞նչ կը լինի այսուհետեւ «Մշակի» դրութիւնը, — չատ հեշտ է նախագուշակել:

Ես մինչև այսօր ոչինչ չեմ խօսալի պ. Արծրունու հետ. նա մի այնպիսի տրամադրութեան մէջ էր գտնվում, որ նրա հետ խօսելն անգամ անկարելի էր: Բայց երբ վիճակը բոլորովին կը որոշվի, ես կառաջարկեմ նրան իմ բարեկամական ծառայութիւնը: Այդ մարդը, իր դժբախտութիւնից յետոյ, այստեղ մնալ չէ կարող. նա պէտք է գնայ արտասահման, բայց արտասահմանում ապրելու ոչինչ միջոց չի ունենայ:

Ես աշդէն կազմել եմ երիտասարդների մի խումբ, որ «Մշակը» վեր առնենք և շարունակենք հրատարակել, իսկ պ. Արծրունու համար տարեկան մի գումար կը նշանակենք, որ արտասահմանում ապրէ: Եթէ նա կընդունէ մեզ առաջարկութիւնը, իր համար էլ չաւ

կը լինի և «Մշակի» էլ կը պահպանուի, իսկ եթէ կը մերժէ, այնուհետեւ ոչ ոք մեղաւոր չի լինի, բացի ինքը։

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեան.

26.

Թիֆլիս, 27 Յուլիսի 1884 ամի.

Յարգելի Բարեկամ,

Ձեր վերջին նամակը ստացայ. Պ. Արծրունու գործերի ցաւալի վախճանը արդէն լսած կը լինէք. աճուրդի ժամանակ նրա կալուածքները ոչ ոք գնող չեղաւ. այդ պատճառով մնաց վրացոց բանկի վրա. Յայտնի բան է, բանկը նոյնպէս անկարող կը լինի պահել, և ստիպւած է վերջը վաճառել, գուցէ շատ պակաս գնով։ Վերջը այդ կալուածքները կը դառնան դարձեալ հայերի սեպականութիւն։

Որպէս խոստացել էի Ձեզ իմ նախորդ նամակում, ես կատարեցի իմ խոստումները. երբ պ. Արծրունին ամեն ինչ կորցրել էր և անմխիթար յուսահատութեան մէջ էր գտնվում, ես գնացի նրա մօտ և առաջարկեցի թէ իմ բարեկամութիւնը և թէ իմ ծառայութիւնը. ես այն աստիճան վերաւորված էի նրանցից, որ իմ կողմից մի այսպիսի քայլ անել պէտք է չափազանց զիջութիւն համարել։ Բայց ես իմ անձնասիրութիւնը ճնշեցի և կրկին ձեռք մեկնեցի նրանց. նրանց զօրախտութիւնը պահանջում էր ինձանից ներողամտութիւն և մոռացութիւն այն բոլոր անախորժ անցքերի, որ կատարվել էին մեր մէջ։

Վերջապէս, ես մեծ մասամբ հասայ իմ նշատակին, այն է՝ մի կողմից միջոց տալ պ. Արծրունուն ապրելու, իսկ միւս կողմից, պահպանել «Մշակի» գոյութիւնը. կազմվեցաւ երիտասարդների մի խումբ, որ յանձն առեց «Մշակի» հրատարակութիւնը, խոստանալով առաջիկայ 1885 թւականի սկզբից իւրաքանչիւր ամիս վճարել պ. Արծրունուն 100 ռուբլ. մինչև 5 տարի. Նոր խմբագրի պաշտօնը կընդունի մեզանից մէկը, պ. Միրզոեանցը. ես անկարող էին խումբագիր լինել, նախ այն պատճառով, որ Ռուսաց հպատակ չէի, երկրորդ, անցեալ տարուայ գործերի քննութիւնը տակաւին վերջացած չէ։

Մենք յանձն ենք առել հրատարակել «Մշակը» եկող տարուայ սկզբից, բայց այս տարուայ սեպտեմբեր ամսից սկսած, չաբաթական մի քանի համար կը տանք, որպէս զի բաժանորդները պահպանենք։

Յանկալի կը լինէր, որ Ձեր և մեր բարեկամ պ. Արասխան-
եանցը նոյնպէս լինէր մեր խումբի մէջ, բայց այնպէս վարվեցաւ,
որ համարեա կորցրեց մերայինների մօտ իր համակրութիւնը, փո-
խանակ միանալու մեզ հետ, նա մի քանի տարբեր անձինքներից
(հակառակ կուսակցութեան) առանձին խումբ կազմեց և կ'սկսէր
էր ինքը վեր առնել «Մշակը», որը, ի հարկէ, չը յաջողվեցաւ։ Այդ
երիտասարդը աւելի յարգելի կը լինէր այստեղ, եթէ իրան փոքր
ինչ ծանր և խոհեմ պահէր. նրա թեթեամտութիւնները ամենին
զգուշացնում են։ Մեզ բաւական վաստեց «Մշակի» գործի մէջ։

Ընդունեցէք իմ խորին յարգանքը։

Յ. Մելիք-Յակոբեան

27.

Թիֆլիս, 3 Հոկտ. 1884 ամի։

Յարգելի բարեկամ,

Ձեր վերջին նամակը, սեպտեմբերի 5-ից գրված, ստացել եմ։
Պ. Արծրունին «Մշակի» խմբագրութիւնը մեզ յանձնելով, ուղևոր-
վեցաւ արտասահման. այժմ նա ապրում է Չիլիցերիայի Ժենն քա-
ղաքում։ Յայտնի չէ, նա կրկին անգամ կը վերադառնայ իր հայրե-
նիքը, թէ ոչ։ Եթէ արտասահմանում մի որևէ իցէ պարապմունք
գտաւ, շատ հաւանական է, որ մնայ այնտեղ։ Բայց ջաւալին այն
է, որ նա իր հետ տարել է և իր կնոջը, որը, որպէս այստեղ նրան
դժբախտացրեց, նոյնպէս և ամեն տեղ, իր վատ ազդեցութեամբ,
թոյլ չի տայ, որ նա իր գրութիւնը ուղղի և մի որևէ իցէ գործով
զբաղվի։ Այդ կինը մի հրէշ է, որի իսկական պատկերը Ձեզ ներ-
կայացնելու համար, երկար նկարագրութիւններ պէտք են։

«Մշակի» համարները մինչև այսօր, որքան ցանկալի էր, դար-
ձեալ չը կարողացանք տալ, որովհետև կառավարութիւնը դեռ ևս
մեր անունով չէ հաստատել այդ լրագրի խմբագրութիւնը, թէև
հարկաւոր եղած բոլոր թղթերը ներկայացված են։

Հաստատութիւնը սպասում ենք Ս. Պետերբուրգից, այժմ այն-
տեղից կախում ունի ամեն մի լրագրի թոյլտուութեան իրաւունքը։
Յոյս կայ, որ մինչև նոյեմբեր և դեկտեմբեր ամիսները ստացվի
իրաւունք հրատարակելու, եթէ մի որևէ իցէ այլ արգելք առաջ չը
բերեն։ Այժմ լրագրութեան և առհասարակ մամուլի գրութիւնը
խիստ դժուարին պայմանների մէջ է գտնվում...

Պ. Արասխանեանցը այստեղ է. նա իր նախկին պաշտօնի մէջ

է գտնվում, այսինքն ներսէսեան և Գայիանեան դպրոցներում դասեր է տալիս: Որքան էլ նրա վարմունքը մեր վերաբերութեամբ անվայել էր, բայց կարող էք հաւատացած լինել, որ այն լուսէից, երբ «Մշակը» կը սկսվէ հրատարակվել, մենք կընդունենք նրան մեր ամենալաւ աշխատակիցների թւում: Այժմ, կարծես նա իր սխալը հասկացել է, և սկսել է մօտենալ մեզ:

Ձեք կարող երեւակայել իմ հոգեկան դրութիւնը, թէ որքան տանջվում եմ ես, որ մնացել ենք առանց սեպհական օրգանի, որ «Մշակի» հրատարակութիւնը այսպէս յետաձգվում է: Նորից պէտք է կաթողիկոսական հարց ծագի. եթէ զիտենայիք, թէ որքան դաւաճակութիւններ, որքան դաւաճանութիւններ և որքան ազգամեծա նենգաւորութիւններ պէտք է կատարվեն, իսկ մենք ստիպուած պէտք է լինենք վատ գործերի լուռ հանդիսատես լինել...

Ընդունեցէք իմ խորին յարգանքը:

Յ. Մելիք-Յակոբեանց:

28.

Թիֆլիս, 18 փետրվարի 1885 ամի.

Յարգելի Բարեկամ,

Այստեղ «Ջալալէդդինի» օրինակները բոլոր գրավաճառների մօտ սպառված լինելով, բաւական պահանջ կայ, եթէ Ձեզ մօտ մնացել են, ուղարկեցէք, իսկ եթէ ոչ, խնդրեմ յայտնեցէք տպագրիչին մի 50 օրինակ ուղարկէ: Իմ հասցէս նոյնն է, որպէս առաջ: Կաթողիկոսական ընտրութեան վերաբերութեամբ մեծամասնութեան աչքը Խրիմեանի վրա է, չառ կարելի է, որ նա ընտրվի: Խրիմեանից յետոյ Մելքիսեդեկի վրա աչք ունեն: Մակարի մասին ես ծակուծուկերում աշխատողներ կան, բայց հազիւ թէ կարող կը լինեն մի բան յաջողացնել:

Հայոց դպրոցների հարցի մասին Ձեզ պէտք է յայտնի լինի, որ վերջին օրերումս Բարձրագոյն հրաման էր եղած, որ երկու շաբաթուայ ընթացքում դպրոցների մէջ մտցնեն նոր կարգադրութիւնները, եթէ ոչ, կառավարութիւնը ստիպված կը լինի փակել դպրոցները: Իջմիածնի Սինօղը հրաւիրել է բոլոր թեմական առաջնորդներին, որ ժողով կազմեն և միախորհուրդ մտածութեամբ պատասխան պատրաստեն: Այդ հարցը այն աստիճան դժուարին և միևնույն ժամանակ վտանգաւոր կողմեր ունի, որ հազիւ թէ Սինօղը կարողանայ մի որևիցէ նպատակայարմար ելք գտնել, առանց կաթողիկոսի:

Պ. Արծրունուց նոր նամակ ստացած չենք. ապրիլ և մայիս ամիսներում սպասում ենք նրա վերադարձին այստեղ:

Ես այժմ զբաղված եմ իմ մասնաւոր աշխատութիւններով. տպագրութեան համար շատ բաներ եմ պատրաստել, առանց յոյս ունենալու, որ կը տպագրվեն. ցենզուրայի խտուրթիւնը չափ չունի...

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեան.

29.

Թիֆլիս, 30 Յուլիսի 1885 ամի.

Յարգելի Բարեկամ,

Ես շատ մեղաւոր եմ Ձեր առջև, որ Ձեր նամակը թողել եմ առանց պատասխանի. կարող էք հաւատացած լինել, որ այդ առաջ է եկել ոչ թէ անուշադրութիւնից, այլ մոռացկոտութիւնից: Այդպէս շատ է պատահում ինձ հետ. նամակներ եմ ստանում, երբ մի փոքր ուշանում է, կարծում եմ, թէ պատասխանը գրել եմ, և այդպէսով շատերին վիրաւորել եմ եւս Բայց Ձեր իրաւացի յանդիմանութիւնը ինձ համար մի լաւ խրատ եղաւ. երբ ստացայ Ձեր վերջին նամակը, հէնց նոյն օրը քնեցի մի գրքոյկ, որ նրա մէջ նշանակեմ ստացված նամակները, թէ ինչ եմ պատասխանել և ինչ է մնում առանց պատասխանի: Յուսով եմ, որ այսուհետեւ այս տեսակ անբաղաճաճութիւններ իմ կողմից չեն պատահիլ:

Պ. Արծրունին այստեղ է, մի քանի շաբաթ է, որ վերադարձել է արտասահմանից. դիտաւորութիւն ունի «Մշակի» հրատարակութիւնը շարունակել և հէնց այդ նպատակով էլ եկած է. Բայց ցենզուրայի կողմից արգելք են դնում, ասելով, իբր թէ ժամանակը կորցրել է: Մամուլի օրէնքով մի լրագրի դադարման օրից մինչև մէկ տարի խմբագիրը իր իրաւունքը պահպանում է, որ կրկին սկսէ հրատարակել: Եւ «Մշակի» վերջին համարը անցեալ տարի դուրս եկաւ Յուլիսի 11-ին, ուրեմն ժամանակը չի կորել, որովհետեւ մինչև այս տարուայ Յուլիսի 11-ը մի տարի կը լրանայ: Վերջապէս, անտեղի արգելքներ են դնում. երևում է, որ խափանելու դիտաւորութիւն ունենւ: Պ. Արծրունին գանգատով է, գրել են Ս. Պետերբուրգ, այնտեղից պատասխան ենք սպասում: Ինչպէս կը վճռեն, — դեռ յայտնի չէ: Պ. Արծրունու արտասահման դնալու ժամանակ մեզ մերժեցին, թոյլ չտուին հրատարակել: Հիմա ինքը խմբագիրն է եկել, նրան էլ թոյլ չեն տալիս:

Կաթողիկոսի մասին դեռ լուր չը կայ, թէ Կայսրը որին է հաստատել: Այստեղ խօսվում է, թէ Մելքիսեդեկը առաջարկել է կա-

առավարութեան՝ իբր թէ ինքը չը պիտի ընդունի կաթողիկոսութիւնը, եթէ Հայոց դպրոցները իրանց նախկին դրութեանը չը վերածվեն, և այդ ուշացնում է հաստատութիւնը: Միւս կողմից Մակարականները մեծ աշխատութեան մէջ են:

Թէ այսպէս թէ այնպէս, այսքանը միայն ճիշտ է, որ կողմնակի կամ ուղղակի աշխատութիւններ չատ եղան յօգուտ Մակարի և ի վնաս Մելքիսեդեկի: Իսկ խեղճ Հայրիկը այս անգամ ևս զրկվեցաւ այն աթոռից, որին նա, միայն նա էր արժան:

Այս տարի դիտաւորութիւն ունեւ հրատարակելու «Կայծերի» II-րդ հատորը և «Դաւիթ-բէկի» X առաջին հատորը, վերջինը պէտք է պատկերազարդ լինի: Զեզ կը խնդրէի, որ ինձ տեղեկութիւն տայիք, արդեօք հնարաւոր կը լինի, որ պատկերները Մոսկվայում նկարել և փորագրել տայինք: Այդ մասին եթէ յարմար կը գտնէք, խորհրդակցեցէք պ. Զ. Մսերեանցի հետ. նա «Փարոսի» հրատարակութեամբ ցոյց տուեց, որ պատկերներ պատրաստել տալու մէջ բաւական ճաշակ ունի: Այստեղ ոչ լաւ նկարիչ կայ, ոչ էլ լաւ փորագրող. մենք կարող ենք ուղարկել Մոսկվայ միայն պատկերների ստուերագիծը (էսկիզներ), իսկ այնտեղ, նրանց համեմատ պէտք է նկարել և փորագրել: Պատկերները կը լինեն «Կայծերի» առաջին հատորի դիրքին համեմատ: Գրեցէք, խնդրեմ, մօտաւորապէս որքան կարժենայ իւրաքանչիւր պատկերը, որ նրա համեմատ ծախքերի մասին հոգանք: Մէկ հատորի համար հարկաւոր կը լինի ոչ աւելի քան 10—պատկեր:

Սպասելով Զեք պատասխանին, կը մնամ Զեզ ամենաջերմ յարգող՝ Յ. Միլիք-Յակոբեանց:

30.

Թիֆլիս, 24 Հոկտեմբ. 1885 ամի.

Յարգելի բարեկամ Մելքօմ Գասպարիչ.

Զեք վերջին նամակը, օգոստոսի 4-ից զրկած, ստացել եմ. շնորհակալ եմ Զեք հոգածութեան համար պատկերների մասին, բայց դեռ չեմ վճակ, թէ որքան յարմար է Մոսկվայում պատրաստել տալը, որովհետեւ նոյն նպատակով ևս բանակցութեան մէջ եմ գտնվում և՛ Գերմանիայում պ. Անդրէաս Արծրունու հետ, և՛ Վենետիկում հայր Ալիշանի հետ:

Պ. Արծրունին կրկին իրաւունք ստացաւ «Մշակը» հրատարա-

կելու. այս տարի համարներ միայն կը տայ, իսկ եկող տարուանից կը սկսվի կանոնաւոր հրատարակութիւնը: Դեռ ես յայտնի չէ, արդեօք ես պիտի աշխատակցեմ, թէ ոչ, որովհետեւ ես և մի քանի երատասարգներ առաջարկում ենք պ. Արծրունուն, որ նա մի խումբ կազմէ մշտական աշխատակիցներից և ընդհանուր ուժերով սկսէ հրատարակութիւնը, և ոչ թէ միայնակ:

Ընթերցող հասարակութեան պահանջներին բաւականութիւն տալու համար, հարկաւոր է, որ լրագրի խմբագրութիւնը լաւ կազմակերպւած լինի, նրա իւրաքանչիւր բաժինը իր առանձին գրողն ունենայ, որ համարները անբովանդակ ու դատարկ դուրս չը գան: Պ. Արծրունին միշտ պատճառ է բերում, թէ փող չունի, չէ կարող վճարել ևն: Բայց այդ խումբը պատրաստ կը լինի և ձրի աշխատել, միայն թէ իր կատարած պարտաւորութիւնների հետ և՛ որոշ իրաւունքներ ունենայ խմբագրատան մէջ, իսկ այդ իրաւունքներն էլ չէ կամենում տալ նրանց պ. Արծրունին, ցանկանում է առաջուայ նման միապետ լինել իր խմբագրատան մէջ, Լրագրի շահերը պահանջում են, որ նա փոքր ի շատէ զիջողութիւններ անէ, որովհետեւ նրա զրութիւնը փոխվել է և պէտք է բոլորովին նոր պայմանների մէջ դնէ գործի սկզբնաւորութիւնը: Ձեր բարեկամ պ. Արասխանեանցը նոյն խումբի մէջ կը լինի. եթէ յիշեալ առաջարկութիւնը չընդունվեցաւ, ես կը հրաժարվեմ աշխատակցելուց, որովհետեւ «Մշակի» համար ոչինչ յաջողութիւն չեմ սպասում ես, եթէ անկարգ զրութեան մէջ կը սկսվի նրա հրատարակութիւնը: Ամեն ոք ցանկանում է օգնել պ. Արծրունուն, բայց նա էլ պէտք է մտածէ, եթէ իր աշխատակիցներին փողով վարձատրել չէ կարող, դնէ պէտք է բարոյապէս վարձատրէ:

• • • • •

Ընդունեցէք իմ խորին յարգանքը

Յ. Մելիք-Յակոբեանց:

31.

Թիֆլիս, 25 Դեկտ. 1885 ամի.

Յարգելի բարեկամ

Մելքոմ Գասպարիչ,

Մի փոքրիկ յանձնարարութիւն առիթ տուեց ինձ գրել այդ նամակը: Մի քանի օր առաջ ճանապարհ ընկաւ դէպի Մոսկվա Ձեր հայրենակիցներից մի երիտասարդ Քրիստափոր Միքայէլեանց անունով, որ զիտաւորութիւն ունի այնտեղ բարձր ուսում ստանալու:

Այդ երիտասարդը բոլորովին աղքատ տղայ է. նա ինքը կը պատմէ Ձեզ, թէ ինչպէս կամ ինչ միջոցներով կարողացել է ուսում առնել: Մոսկվայում ապրելու համար նա ունի միայն ամսական 15 ռուբլի, ի հարկէ, դա շատ փոքր գումար է նրա ապրուստի համար:

Ես և ինձ հետ պ. Միքայէլեանցի մի քանի բարեկամները աշխատելու ենք, որ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւնը ամսական մի 10 կամ 15 ռուբլի նշանակէ նրա համաց: Բայց մինչև որ այդ կիրադրովէր, և որպէս զի նա ծախքերի կարօտութիւն չը կրէր, ես կը խնդրէի Ձեզանից, որ ծանօթացնէիք նրան զանազան հայ ընտանիքների հետ, եթէ երեխաների համար մասնաւոր դասատու կը պահանջեն, նա կարող է շատ խղճմտանքով պարապվել: Պ. Միքայէլեանցը լաւ վարժապետ է, իսկ նրա բարոյականութեան մասին կարող էք հաւատացած լինել, որ ամենապատուական երիտասարդ է:

Ընդունեցէք իմ անկեղծ յարգանքը Յ. Մելիք-Յակոբեանց:

32.

Թիֆլիս, 8 Յուլիսի 1886 ամի.

Յարգելի բարեկամ

Պարոն Մ. փանեանց,

Շնորհակալութեամբ ստացայ իմ գրքերի մնացած հաշիւից զոյացած 15 ռուբլ 30 կոպ., ստացել եմ նաև Ձեր վերջին երկու նամակները:

Ձեմ կարող խօսքերով բացատրել այն մեծ գոհունակութիւնը, որ Դուք Ձեր առաքինական բարեսրտութեամբ պատճառեցիք ինձ այսքան տարուայ ընթացքում: Շնորհակալ եմ, աղնիւ պարոն, թող իմ սրտագին երախտագիտութիւնը վարձատրութիւն լինի Ձեր աշխատութեան: Դուք միշտ բարի էք և զի դէպի հանգուցեալ Նազարեանցը և նոյն բարութիւնը ցոյց տուեցէք ինձ: Եթէ հայերը Ձեր հոգին ունենային, նրա գործիչները շատ դժբախտ չէին լինի:

Լաւ էք մտածել, որ հեռանում էք մայրաքաղաքի ազմուկից և Ձեր կեանքի վերջին օրերը ցանկանում էք հայրենեաց գրկում անցուցանել: Թէև Ձեր բացակայութիւնից յետոյ Մոսկվայի եկեղեցիները շատ պիտի կորցնեն իրանց բարեգործութիւնից, այսուամենայնիւ, Ձեզ պէտք է հանգստանալ, և հանգստանալ հայրենեաց լոռութեան մէջ, հին բարեկամների և ազգականների շրջանում: Դուք Ձեր կեանքում շատ էք գործել, և Ձեր պարտքը պէտք է վճարած համարէք:

Կը ցանկայի այստեղ տեսնել Ձեզ և մօտից սեղմել Ձեր բարեկամական ձեռքը: Ձեզ ի հարկէ դժուար կը լինի գտնել իմ բնակարանը, բաւական է, և թէ յայտնէք «Անտրոնական գրավաճառանոցում», որ Դուք եկել էք և ես աւելի շուտով կը գտնեմ Ձեզ:

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեանց.

33.

Թիֆլիս, 19 Մարտի 1888 ամի

Մեծապատիւ Պարոն Մ. Կ. Փանեանց,

Երկար ժամանակ Ձեզանից նամակ չստանալուց յետոյ, վերջապէս ստացայ 25 փետրվարի գրած նամակը, որով յայտնում էք, թէ «Կայծերի» II հատորը, իւր ժամանակին ստանալով, յանձնել էք բաժանորդներին, բացի երեք անձինքներից, որոնց անունները նշանակել էք Ձեր նամակում: Նրանց պատկանելի օրինակները կաշխատեմ շուտով հասցնել իրանց, ստուգելուց յետոյ, թէ որտեղ են գտնվում:

Եւ այս տեսաւ իմ մի նոր աշխատութիւնը՝ «Սամուէլ» պատմական վէպը: Թէ որպիսի ընդունելութիւն կը գտնէ բնթերցող հասարակութիւնից, — գեռ չը գիտեմ, միայն այսքանը կասեմ, որ հայերը տակաւին պատրաստված չեն մի լուրջ և ծանր բան կարդալու համար:

Յիշեալ վէպից 5 օրինակ ուղարկեցի Ձեզ, որից մէկը կրտսեր հաճէք ընդունել մեր կողմից նուէր, իսկ մնացեալ չորսը կը բաժանէք հետեւեալ պարօններին.

1 օրինակ Սմբատ Շահազիզին:

1 օրինակ Մկրտիչ Էմինին:

1 օրինակ Գ. Ենգիրարեանցին (ուսանող):

1 օրինակ Յովհ. Յովհաննիսեանցին (նոր բանաստեղծ):

Ընդունեցէք իմ խորին յարգանքը.

Յ. Մելիք-Յակոբեանց.

Գրքերի իւրաքանչիւրի վրայ մակագրուած է անունները:

Յ. Տէր-Յակոբեանց.

Մանօթ. Խմբագրութիւնն պարտք է համարում յայտարարելու, որ անհնար եղաւ անփոփոխ հրատարակել այս նամակները, կրճատումներ կատարուեցին № № 16, 21, 29 եւ 30 նամակներից:

Խմբագրութիւն.